

**Նախագահ Հենրի Բ. Այրինգ**
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

# Գործեք ողջ ջանասիրությամբ

*Մենք պետք է սովորենք մեր պարտականությունը Տիրոջից, իսկ հետո գործենք ողջ ջանասիրությամբ, երբեք ծույլ կամ ալարկոտ չլինենք:*

Եղբայրներ, երախտապարտ եմ լինել ձեզ հետ այս երեկո: Եվ ես խոնարհված եմ զգում այն ամենից, ինչ գիտեմ ձեր հավատարիմ քահանայական ծառայության մասին: Այս երեկո ես կխոսեմ Տիրոջ ծառայության մեջ ջանասիրության մասին: Վերջին փորձառությունները ինձ առաջնորդեցին դեպի այդ ընտրությունը:

Իմ վերջին փորձառություններից մեկն էր Ահարոնյան Քահանայության ուշագրավ նոր գրքույկի խնամքով ուսումնասիրությունը, որի մասին խոսեց Եղբայր Դեյվիդ Լ. Բեքը: Այն վերնագրված է *Կատարել իմ Պարտականությունն Աստծո առաջ*: Երբ կարդացի և խորհեցի, թե ինչ է այն ակնկալում, որ երիտասարդ տղամարդիկ անեն և դառնան, ես հասկացա, որ այն նկարագրում է այն, ինչ Նախագահ Բրիգամ Յանգն էր խոստացել քահանայություն կրողին, որը ջանասեր է ողջ կյանքի ընթացքում: «Անձնավորությունը, որը Քահանայություն է կրում, և հավատարմորեն շարունակում իր կոչումում, որը հրճվում է անընդհատ կատարելով իր ձեռքից Աստծո պահանջած բաները, և շարունակում ողջ կյանքում կատարելով ամեն պարտականություն, կապահովի իր համար ոչ միայն ստանալու արտոնությունը, այլ գիտելիք, թե ինչպես ստանա Աստծո բաները, որպեսզի կարողանա միշտ իմանալ Աստծո միտքը»:[1]

Միայն մի քանի շաբաթ առաջ, հանդիպեցի մի նոր սարկավագի, որը սկսեց ջանասիրության այդ ուղին: Նրա հայրը ցույց տվեց ինձ մի սխեմա, որը գծել էր իր որդին և որը ցույց էր տալիս իրենց աղոթատան յուրաքանչյուր շարքը, յուրաքանչյուր սարկավագի համարը, որը կնշանակվի բաժանել հաղորդությունը, և նրանց ուղին ժողովատան միջով անդամներին հաղորդությունը մատուցելիս: Հայրը և ես ժպտացինք մտածելով, որ տղան, առանց նրա օգնությունը խնդրելու, կամեցել էր պլան կազմել, որը կապահովեր իր քահանայության ծառայության հաջողությունը:

Ես ճանաչեցի նրա ջանասիրության մեջ *Պարտականություն Աստծո առաջ* գրքույկի կարգաձևը: Դա իմանալն է, թե ինչ է Տերը սպասում ձեզանից, դա իրականացնելու ծրագիր կազմելը, ծրագրի համաձայն ջանասիրաբար գործելը, իսկ հետո ուրիշների հետ կիսվելը նրանով, թե ինչպես ձեր փորձառությունը փոխեց ձեզ և օրհնեց ուրիշներին:

Սարկավագը պատրաստել էր այդ սխեման իր համար՝ համոզված լինելու, որ ինքը կկարողանար անել այն, ինչ Տերը կանչել էր իրեն անել: Իր քահանայության ծառայության սկզբում, Տերը սովորեցնում էր նրան անընդհատ հրճվել «անելով այն բաները, որոնք Աստված պահանջում է նրա ձեռքից»:[2]

Մեկ այլ փորձառություն, որը ստիպեց ինձ խոսել ձեզ հետ այս երեկո ջանասիրության մասին, կապված է այս կյանքում քահանայության ծառայության ավարտին մոտենալու հետ: Նա եպիսկոպոս էր եղել երկու անգամ: Եպիսկոպոս լինելու նրա առաջին կանչը տարիներ առաջ էր, երբ ես հանդիպեցի նրան, այն ժամանակ, երբ նա երիտասարդ էր: Այժմ նա ծեր էր, երկրորդ անգամ ազատվեց եպիսկոպոսի կոչումից: Նրա ֆիզիկական



վիճակի վատթարացումը խիստ դժվարացրեց որևէ քահանայական ծառայություն մատուցումը:

Սակայն նա ջանասիրաբար գործելու ծրագիր ուներ: Ամեն կիրակի, հասնելով եկեղեցի, նա նստում էր դռանն ամենամոտ շարքում, որի կողքով մտնում էին հաղորդության ժողովի մասնակիցների մեծամասնությունը: Նա վաղ էր հասնում տեղ, որ նստատեղն ազատ լիներ: Յուրաքանչյուր մարդ տեղ հասնելուն պես տեսնում էր նրա սիրո և ողջույնի հայացքը, ճիշտ ինչպես այն ժամանակ, երբ նա նստում էր ամբիոնում որպես իրենց եպիսկոպոս: Նրա ազդեցությունը ջերմացնում էր և թևավորում մեզ, որովհետև մենք գիտեինք, թե ինչ գին էր նա վճարել ծառայելու համար: Նրա հանձնարարությունը որպես եպիսկոպոս ավարտվել էր, նրա քահանայության ծառայությունը՝ ոչ:

Դուք տեսել եք քահանայության այդպիսի մեծ ծառաների օրինակներ: Այս երեկո ես կփորձեմ պատմել, թե ինչ եմ սովորել նրանց մասին: Ամեն-ինչ սկսվում է սովորելուց, թե ում են նրանք ծառայում և ինչ նպատակով: Երբ այն ներթափանցում է նրանց սրտերը, առաջացնում է ողջ փոփոխությունը:

Առաջինը, ես կխոսեմ ուղղակիորեն Ահարոնյան Քահանայության երիտասարդ տղամարդկանց մասին: Դուք ավելի ջանասեր կդառնաք, երբ զգաք ձեր հանդեպ Աստծո վստահության վիթխարիությունը: Առաջին Նախագահությունից մի ուղերձ կա ձեզ համար *Պարտականություն Աստծո առաջ* գրքույկում: «Երկնային Հայրը մեծ վստահություն և հավատք ունի ձեր հանդեպ և ձեզ համար կարևոր առաքելություն ունի կատարելու: Նա կօգնի ձեզ, երբ դիմեք Նրան աղոթքով, լսեք Հոգու հուշումները, հնազանդվեք պատվիրաններին և պահեք ուխտերը, որոնք դուք արել եք»:[3]

Հովհաննես Մկրտիչը վերադարձավ երկիր վերականգնելու քահանայությունը, որը դուք՝ երիտասարդ տղամարդիկ, կրում եք: Նա կրում էր Ահարոնյան Քահանայության բանալիները: Հովհաննեսինն էր, որ դիմեց Հիսուսը մկրտվելու համար: Հովհաննեսը գիտեր, թե ով էր իր մոտ եկել: Նա ասաց Տիրոջը. «Ինձ



պետք է քեզանից մկրտուել»:[4]

Հովհաննեսը գիտեր, որ Ահարոնի քահանայությունը կրում է հրեշտակների մատակարարության, և ապաշխարության ավետարանի, և մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտության բանալիները, երբ Տերն ուղարկեց նրան ձեռնադրելու Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին 1829թ. մայիսի 15-ին:[5] Նա գիտեր, թե ով էր այցելել իրեն և ինչ փառահեղ նպատակի համար էր նա ուղարկվել:

Ձեր քահանայության կոչումները թույլ են տալիս ձեզ մատուցել Տիրոջ Ընթրիքի հաղորդությունը Իր Եկեղեցու անդամներին այսօր: Դա այն նույն արտոնությունն է, որ Տերը շնորհեց Տասներկու Առաքյալներին Իր մահկանացու ծառայության ժամանակ: Նա կրկին արեց դա, երբ Իր Հարությունից հետո կանչեց տասներկու աշակերտներին առաջնորդելու Իր Եկեղեցին:

Տերն Ինքը, ինչպես նկարագրվում է Մորմոնի Գրքում, տվեց Իր անսահման զոհաբերության խորհրդանիշները և մատակարարեց դրանք ժողովրդին: Մտածեք Նրա մասին և թե ինչպես է Նա պատվում ձեզ, երբ դուք կատարում եք ձեր քահանայության ծառայությունը: Երբ հիշեք Նրան, դուք կվճռեք կատարել այդ սուրբ ծառայությունը Նրա նման, որքանով կարող եք, այնքան լավ և հավատարմորեն ինչպես Նա արեց:[6]

Դա կդառնա գործելակերպ ձեր կյանքում, որը կմեծացնի ձեր ուժը ջանասեր լինելու քահանայության ամեն ծառայությունում, որի համար Տերը նախապատրաստում է ձեզ և որին նա ձեզ կկանչի: Այդ վճռականությունը կօգնի ձեզ պատրաստվել Մելքիսեդեկյան Քահանայություն ստանալուն, որը հին դարերում կոչվում էր «Սուրբ Քահանայություն ըստ Աստծո Որդու Կարգի»:[7]

Այժմ ես ուզում եմ խոսել նրանց հետ, ովքեր կանչվել են և պատվի արժանացել ծառայելու Մելքիսեդեկյան Քահանայությունում: Ահարոնյան Քահանության նման Մելքիսեդեկյան Քահանայությունն ավելին է, քան վստահություն անելու այն, ինչ Տերը կկամենար անել: Այն հրավեր է դառնալ այնպիսին, ինչպիսին Նա է: Ահա Նրա խոստումը՝

«Քանզի նրանք, ովքեր հավատարիմ են այս երկու քահանայությունները ստանալու, որոնց մասին ես խոսեցի, և իրենց կոչումը մեծարելու, Հոգու կողմից սրբագործվում են՝ ի նորացումն իրենց մարմնի:

Նրանք դառնում են Մովսեսի ու Ահարոնի որդիները, և Աբրահամի սերունդը, և եկեղեցին ու արքայությունը և ընտրյալներն Աստծո:

Եվ նաև, բոլոր նրանք, ովքեր ընդունում են այդ քահանայությունը, ընդունում են ինձ, ասում է Տերը.

Քանզի նա, ով ընդունում է իմ ծառաներին, ընդունում է ինձ.

Եվ նա, ով ընդունում է ինձ, ընդունում է իմ հորը.

Եվ նա, ով ընդունում է իմ Հորը,ընդունում է իմ Հոր արքայությունը. Հետևաբար, այն ամենն, ինչ իմ Հայրն ունի, կտրվի նրան»:[8]

Կա մի ձև, որով բոլոր քահանայություն կրողները բարձրացվում են դեպի այդ փառահեղ օրհնությունը: Սուրբ գրություններում կա մի հատված, որտեղ Տերը տալիս է այդ ձևը մեզ համար, դա Վարդապետություն և Ուխտերի 107բաժինն է:



«Ուստի, այժմ թող ամեն տղամարդ սովորի իր պարտականությունը և ողջ ջանասիրությամբ գործի այն պաշտոնում, որում նշանակված է:

Նա, ով ծույլ է, արժանի չի համարվի կանգուն մնալ, և նա, ով չի սովորում իր պարտականությունը և իրեն չի արդարացնում, արժանի չի համարվի կանգուն մնալ: Ճիշտ այդպես: Ամեն»:[9]

Մենք պետք է սովորենք մեր պարտականությունը Տիրոջից, իսկ հետո գործենք ողջ ջանասիրությամբ, երբեք ծույլ կամ ալարկոտ չլինենք: Չնը պարզ է, բայց ոչ հեշտ հետևելու համար: Մենք այնքան հեշտորեն ենք շեղվում: Ամենօրյա նորություններն ուսումնասիրելը կարող է թվալ ավելի հետաքրքիր, քան քահանայության դասագրքի դասը: Նստելը և հանգստանալը կարող է ավելի գրավիչ լինել, քան այցելության համար պամանավորվածություններ ձեռք բերելը նրանց հետ, ովքեր մեր քահանայության ծառայության կարիքն ունեն:

Երբ ես ինձ գտնում եմ հեռացած իմ քահանայության պարտականություններից ուրիշ հետաքրքրությունների պատճառով և երբ մարմինս աղերսում է հանգիստ, ես քաջալերում եմ ինձ այս խոսքերով. «Հիշիր Նրան»: Տերը քահանայության ծառայության մեջ ջանասիրության մեր կատարյալ օրինակն է: Նա մեր հրամանատարն է: Նա է մեզ կանչել: Նա մեր առջևից է գնում: Նա է ընտրել մեզ Իրեն հետևելու և ուրիշներին մեզ հետ բերելու համար:

Այս երեկո ես հիշում եմ Նրան և դա հուզում է սիրտս: Սա այն շաբաթ երեկոն է, նախքան Զատկի կիրակին, երբ մենք հիշում ենք Նրա Հարությունը: Ես հիշում եմ Նրա օրինակը Իր մահվան նախօրեին:

Իր Հոր սիրո համար և մեզ համար, Նա թույլ տվեց Իրեն տանջվել մահկանացու մարդու ունակությունից վեր: Նա պատմեց մեզ, թե այդ անսահման զոհաբերությունն ինչ պահանջեց Իրենից: Դուք հիշում եք խոսքերը.

Քանզի ահա, ես` Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն,

«Բայց, եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես,

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել թե մարմնով, թե ոգով,- և ես ցանկացա, որ գուցե չխմեմ դառը բաժակը և ընկրկեմ,-

Այնուամենայնիվ, փառք լինի Հորը, և ես ճաշակեցի ու ավարտեցի իմ նախապատրաստությունները մարդկանց զավակների համար»:[10]

Գողգոթայի խաչի վրայից Փրկիչը հայտարարեց. «Կատարված է»:[11] Ապա Նրա հոգին լքեց մարմինը և Նրա մահկանացու աճյունը հավատարմորեն դրվեց գերեզման: Նա մեզ դաս տվեց նրանով, ինչ արեց երեք օրերի ընթացքում հոգևոր աշխարհում, նախքան Իր Հարություն առնելը, որը ես հիշում եմ, երբ գայթակղվում եմ` զգալով որ վերջացրեցի մի դժվարին հանձնարարություն Նրա ծառայության մեջ և արժանացել եմ հանգստի:

Փրկչի օրինակը տալիս է ինձ քաջություն առաջ անցնելու: Նրա աշխատանքները մահկանացու կյանքում ավարտվել էին: Բայց Նա մտավ հոգևոր աշխարհ, վճռելով շարունակել հոգիներ փրկելու Իր փառահեղ գործը: Նա կազմակերպեց հավատարիմ հոգիների աշխատանքը` փրկելու նրանց, ովքեր դեռ կարող էին դառնալ Իր քավող զոհաբերության միջոցով հնարավոր դարձած ողորմության ճաշակողներ: Հիշեք Վարդապետություն և Ուխտեր 138-րդ բաժնի խոսքերը.

«Այլ ահա, արդարների թվից նա կազմավորեց իր ուժերը և նշանակեց սուրհանդակներ, որոնք հանդերձավորված էին զորությամբ ու իշխանությամբ, և լիազորեց նրանց առաջ գնալ և տանել ավետարանի լույսը նրանց, ովքեր խավարի մեջ էին, այսինքն` բոլոր մարդկային ոգիներին և այսպես ավետարանը քարոզվեց մեռելներին:

Եվ ընտրված սուրհանդակներն առաջ գնացին հայտարարելու Տիրոջ ընդունելի օրը և ազատություն հռչակելու գերիներին, որոնք կապված էին, այսինքն` բոլոր նրանց, ովքեր կապաշխարեին իրենց մեղքերից և կընդունեին ավետարանը»:[12]

Երբ մենք հիշում ենք Նրան, ավելի հեշտ է լինում դիմադրել քահանայության մեր աշխատանքներից հանգիստ առնելու գայթակղությանը: Մենք պետք է որ հիշած լինենք Նրան այսօր, և մենք այստեղ ենք` սովորելու մեր պարտականությունները, վճռականորեն անելու այն, ինչ մենք ուխտել ենք անել ողջ ջանասիրությամբ: Եվ Նրա օրհակի շնորհիվ մենք կհամբերենք մինչև վերջ այս կյանքում Նրա տված հանձնարարություններում, և կլինենք պարտավորված անելու Նրա Հոր կամքը հավիտյան, ինչպես Նա էր պարտավորված:

Սա Տիրոջ Եկեղեցին է: Նա կանչեց մեզ և վստահեց մեզ, նույնիսկ այն թուլություններով հանդերձ, որոնք Նա գիտեր, մենք ունենք: Նա գիտեր փորձությունները, որոնց մենք դիմակայելու էինք: Հավատարիմ ծառայության միջոցով և Նրա Քավության միջոցով մենք կարող ենք սկսել ցանկանալ այն, ինչ Նա է ցանկանում, և լինել այն, ինչ մենք պետք է լինենք` օրհնելու նրանց, ում մենք ծառայում ենք Նրա համար: Երբ մենք բավականաչափ երկար ծառայենք և ջանասիրությամբ

Նրան, մենք կփոխվենք: Մենք կարող ենք էլ ավելի նման դառնալ Նրան:

Ես տեսել եմ Նրա ծառաների կյանքում այդ հրաշքի ապացույցը: Ես տեսա դա մի քանի շաբաթ առաջ մի հավատարիմ քահանայություն կրողի հյուրասենյակում:

Ես գիտեի նրան որպես սարկավագ, հայր, եպիսկոպոս և ցցի նախագահության անդամ: Տասնյակ տարիներ ես ականատես եմ եղել Աստծո զավակներին իր քահանայության միջոցով ծառայելիս նրա ջանասիրությանը:

Նրա ընտանիքը հավաքված էր նրա շուրջը հյուրասենյակում: Նա ժպտում էր կոստյում, ճերմակ վերնաշապիկ և փողկապ հագած: Ես զարմացա, քանի որ ինձ ասել էին, որ նա ցավոտ բժշկական գործընթացների մեջ էր, որոնք դեռ չէին ապաքինել նրան:

Նա ողջունեց ինձ, ինչպես նա պետք է որ ողջունած լիներ հարյուրավոր ուրիշ այցելուների, մի ողջ կյանքի ժամանակ քահանայության ծառայությանը նվիրվելիս: Ես եկել էի օգնելու նրան այդ փորձությունների մեջ, բայց, ինչպես հաճախ է պատահում քահանայության ծառայության ժամանակ, ինձ օգնեցին և ես ուսուցանվեցի:

Մենք նստեցինք և հաճելիորեն զրուցեցինք: Նա պատմեց, թե ինչպես էր նրա հայրը խնամել մորս, երբ նա մահվան շեմին էր: Ես չգիտեի այդ մասին: Այդ ժամանակ ես հասկացա, որ նա երեխա ժամանակ էր սովորել իր ջանասեր քահանայություն կրող հորից, թե ինչպես օգնության հասներ: Այդ միտքը երախտագիտության զգացում առաջացրեց իմ մեջ այն ժամանակների համար, երբ ես վերցնում էի իմ փոքրիկ որդիներին ինձ հետ քահանայության այցելություններ կատարելիս՝ մխիթարելու և օրհնելու համար:

Մի քանի րոպեից նա ինձ ցածրաձայն հարցրեց. «Արդյոք պատշաճ կլինե՞ր խնդրել, որ դուք ինձ քահանայության մի օրհնություն տայիք»: Նրա նախկին ցցի նախագահը, որի հետ նա ծառայել էր տարիներ շարունակ, Մելքիսեդեկյան Քահանայության զորությամբ սրբագործված յուղով օծեց նրա գլուխը:

Երբ կնքում էի օրհնությունը խոստումներով, Սուրբ Հոգու կողմից ուսուցանվեցի մի փոքր այն մասին, ինչ Տերն արդեն արել էր այս հավատարիմ քահանայություն կրողի համար: Նա մաքուր էր, նրա մեղքերը լվացված էին: Նրա էությունը փոխված էր՝ ցանկանալով, ինչ Փրկիչն էր ցանկանում: Նա մահից չէր վախենում: Նրա սրտի ցանկությունն էր ապրել՝ ծառայելով իր ընտանիքին և Երկնային Հոր մյուս զավակներին, ովքեր նրա կարիքն ունեին:

Ես դուրս եկա այդ գիշեր, լինելով երախտապարտ Տիրոջը քահանայության Նրա նվիրված ջանասեր ծառաներին, և Տիրոջ բարության ականատես լինելու համար: Նա փոխում է նրանց սրտերը, որպեսզի նրանք ցանկանան այն, ինչ Ինքն է ցանկանում, և գործեն այնպես, ինչպես Ինքը կգործեր:

Ես եզրափակում եմ Տիրոջ քահանայության ծառայողներին դիմելով այս խորհրդով: Խորհեք խորապես և ջանասիրաբար սուրբ գրությունների և ապրող մարգարեների խոսքերի մասին: Աղոթքով հետևողականորեն խնդրեք Սուրբ Հոգուն բացահայտել ձեզ Հայր Աստծո և Նրա սիրելի Որդու էությունը: Աղերսեք, որ Հոգին ցույց տա ձեզ, թե ինչ է ուզում Տերը, որ դուք անեք: Ծրագրեք անել դա: Խոստացեք Նրան հնազանդ լինել: Գործեք վճռականորեն մինչև անեք այն, ինչ Նա է խնդրել: Իսկ հետո աղոթքեք շնորհակալություն հայտնելով ծառայելու հնարավորության համար և որպեսզի իմանաք ձեր հաջորդ քայլը:

Ես վկայում եմ, որ մեր Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսն ապրում են: Նրանք հարություն առած և փառավորված էակներ են, ովքեր սիրում են մեզ և հսկում են մեզ: Քահանայության բանալիները վերականգնվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթին՝ երկնային սուրհանդակների միջոցով: Դրանք անցել են անխախտ գծով Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին: Այդ բանալիները կրում է յուրաքանչյուր ապրող Առաքյալ:

Ես թողնում եմ իմ օրհնությունը, որ դուք սկսեք զգալ Հոգու միջոցով վստահության և խորհուրդների վիթխարիությունը, որոնք դուք ստացել եք որպես Տիրոջ Եկեղեցու քահանայության ձեռնադրված ճշմարիտ ծառաներ, Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 128.
2. *Teachings: Brigham Young,* 128.
3. *Fulfilling My Duty to God: For Aaronic Priesthood Holders* (booklet, 2010), 5.
4. Մատթեոս Գ.14:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 13:
6. Տես 3 Նեփի 20.3–9:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.3, տես նաև Ալմա 13.1–9:
8. Վարդապետություն և Ուխտեր Ի 84.33–38:
9. Վարդապետություն և Ուխտեր 107.99–100:
10. Վարդապետություն և Ուխտեր 19.16–19:
11. Հովհաննես ԺԹ.30:
12. Վարդապետություն և Ուխտեր 138.30–31:

